

Բ. Հ. ՎԵՐԴՅԱՆ, ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 1970, 375 էջ

Հայ լեզվաբանական-քերականագիտական միտքը հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում զգալի նվաճումներ է ձեռք բերել հայերենի քերականության նաև շարահյուսության բաժնի ուսումնասիրության բնագավառում: Մ. Արեղյանի «Աշխարհարարի շարահյուսությունից» հետո, որտեղ առաջին անգամ լավագույնս քննվել ու լուսարանվել է արևմտահայ աշխարհարարի շարահյուսական համակարգը, հրապարակվել են ոչ քիչ աշխատություններ, որոնցով բավականաչափ առաջ է տարվել հայերենի շարահյուսության ուսումնասիրության շնորհակալ գործը: Չնայած դրան, ձևաբանության համեմատությամբ շարահյուսության ուսումնասիրությունը ետ է մնում, և բնականաբար՝ կան շարահյուսական բազմաթիվ հարցեր, որոնք զեղեն առանձին ու ամբողջական քննության նյութ չեն դարձել:

Շարահյուսական կառուցվածքով, բառերի կապակցման ու նախադասությունների կառուցման օրենքներով ու բազմաքանակ արտահայտություններով հայերենը երևան է հանում անսպառ հարստություններ, որոնց մեծագույն մասն էլ մարմնավորված ենք տեսնում բարդ՝ թե՛ համադասական և թե՛ ստորադասական նախադասությունների համակարգում: Իբրև լեզվի գոյի՝ խոսքի միավորներ, դրանք արտահայտում ու արտացոլում են արտաքին աշխարհի բազմազան իրողությունները՝ դրանց միջև իրապես գոյություն ունեցող բարդ կապերով ու հարաբերություններով:

Բարդ ստորադասական նախադասության բնությանն է նվիրված Բ. Վերդյանի «Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն» աշխատությունը: Դա ժամանակակից արևելահայ գրական լեզվի բարդ ստորադասական նախադասության լրիվ ու ամբողջական ուսումնասիրությունն է, որը համալրելով անցյալում ձեռք բերված նվաճումները՝ բացահայտում է բարդ ստորադասական նախադասության կառուցվածքի ու կապակցության, նրա կազմի մեջ մտնող երկրորդական նախադասությունների օրենքներն ու օրինաչափությունները, տալիս այդ բոլորի դիտական կուլ ու ամփոփ նկարագիրը:

Աշխատության առաջին գլուխը (էջ 7—116) հատկացված է բարդ ստորադասական նախադասության կառուցվածքի քննությանը: Ուղենիշ ունենալով այն ճիշտ սկզբունքը, որ «Բարդ նախադասությունը դիալեկտիկական մի ամբողջություն է իր մասերի հակադրամիասնությամբ» (էջ 14), և նրա սկզբնավորման կարևորագույն պայմաններից մեկը... հաղորդման տվյալ պահին բաղադրիչների արտահայտած մտքերի սերտ կապն է» (էջ 15), Բ. Վերդյանը նախադասության էությունը պարզելուց և բարդ համադասական ու բարդ ստորադասական նախադասությունների սահմանները նախապես որոշելուց հետո առաջադրում ու լուծում է այնպիսի հարցեր, որոնք գիտական արժեք ունեն և կարևոր են հենց բարդ ստորադասական նախադասությունների համակողմանի ուսումնասիրության համար:

Այսպես՝ հիմնավորապես ապացուցվում է, որ դերբայական դարձվածները և երկրորդական նախադասությունները տարբեր գոյացություններ են լեզվի մեջ, և ինչպես մեկը, այնպես էլ մյուսը մտքերի արտահայտման տարբեր ձևեր են: Իբրև ալոպիսիք, ընդհանրություններից զատ, նրանք իրար նկատմամբ երևան են հանում նաև իմաստային տարբերություններ, ուստի և միշտ չէ, որ հնարավոր է լինում «կրճատել» երկրորդական նախադասությունը և դա փոխարինել դերբայական դարձվածով:

Աշխատության հեղինակը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, որ հնարավոր չէ կրճատել հատկապես «հետևանք արտահայտող ձևի և չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունների մեծագույն մասը» (էջ 32), ինչպես նաև այն երկրորդական նախադասությունները, որոնք իրենց «զլխավոր նախադասության հետ կապակցվում են թե՛ հոլովով պորժածված որևէ հարաբերական գերանվամբ» (էջ 32), և կամ որոնց մեջ «շաղկապող հարաբերական գերանվան հետ գործածվում է որևէ կապ» (էջ 93):

Բարդ ստորադասական նախադասությունները շարահյուսական՝ բարդ ու յուրահատուկ կառուցվածք ունեցող միավորներ են, որոնց բաղադրիչ մասերը՝ զլխավոր ու երկրորդական նախա-

դասությունները փոխադարձ սերտ կապով իրար հետ կապվելով և փոխադարձաբար իրարով պայմանավորվելով՝ արտահայտում են բնության տրամաբանական բազմազան ու բարդ հարաբերությունները՝ և իրենց որոշակի տեղն ու կշիռն ունեն նրանց կազմում:

Այս և նման հարցերը քննության առնելով՝ Բ. Վերդյանը բացահայտել է բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ մասերի փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը, նրանց միջև դրսևորվող հարաբերությունները, պարզաբանել դիսալոր ու երկրորդական նախադասությունների առանձնահատկությունները և նրանց որոշման հիմունքները, մատնանշել ստորադասական նախադասության կառուցվածքային տիպերը, դիսալոր և երկրորդական նախադասությունների շարահյուսական, վերաբերական փոխհարաբերությունները և հանդել համապատասխան հզորակացությունները:

Նա, օրինակ, դնում է, որ խոսքի մեջ նախադասությունների կապն արտահայտվում է ինչպես նրանց մտքի, այնպես էլ թերականական ձևերի միջոցով» (էջ 61), որ «զլիսավոր և երկրորդական նախադասությունների միջև եղած հարաբերություններն ավելի բարդ են ու բազմապիսի, քան ավանդական թերականության կողմից նշված ձևերը» (էջ 71), որ պատահում են դեպքեր, երբ բարդ ստորադասական նախադասության մեջ բովանդակությամբ իշխող են լինում ոչ թե զլիսավոր, այլ երկրորդական նախադասությունները: Այդպես և ցույց է տրվում, որ կան ստորադասական կապակցության կառուցվածքային երկու տարբեր՝ երկրորդային (իմա՝ մեկ դիսալոր և մեկ երկրորդական նախադասություններից կազմված) և բազմաբարդ (իմա՝ մեկ կամ մեկից ավելի երկրորդական նախադասություններից կազմված) տիպեր, որ «երկրորդական նախադասությունը կարող է լրացնել ինչպես զլիսավոր նախադասության մեջ մի որևէ կոնկրետ առարկա, այնպես և մի բառակապակցության կամ նախադասությանը ամբողջությամբ» (էջ 99), որ հայերենում միշտ էլ եղել են առանձին գործածվող երկրորդական նախադասություններ, որոնք «արդի գրական հայերենում հասել են մինչև շարահյուսական ինքնուրույն միավորի, նախադասության հատուկ տիպի աստիճանի» (էջ 115) և այլն:

Աշխատության երկրորդ գլուխը (էջ 117—247) նվիրված է երկրորդական նախադասությունների բնույթի քննությանը: Իսկ ինչպես հայտնի է, բարդ ստորադասական նախադասությունը ավելի խոր ու հանգամանորեն է ուսումնասիրված հենց այդ տեսակետից, և որ բնագավառում էլ մեծ ծառայություններ ունեն հատկապես Գ. Սևակը, Վ. Առաքելյանը, Պ. Պողոսյանը, Ն. Պառնասյանը, մասամբ և ուրիշները:

Հարց է ծագում, ո՞րն է տվյալ դեպքում հեղինակի բերած նորը: Նորն այն է, որ նա երկրորդական նախադասությունների բնույթի քննությունը կատարել ու առաջ է տարել «երկու կարևոր հանգամանքների զուգորդմամբ»՝ նկատի է ունեցել մի կողմից՝ թե «երկրորդական նախադասությունը իմաստային ինչպիսի փոխհարաբերության մեջ է զլիսավորի հետ, իսկ մյուս կողմից՝ իմաստային այդ փոխհարաբերությունը ինչպիսի արտահայտություն է ստանում» (էջ 118) և այդ ամենի հիման վրա բացատրել բարդ ստորադասական նախադասության շուրջնաբանված շատ կողմերը:

Աշխատության վերջին գլխում (էջ 248—369) Բ. Վերդյանը ուսումնասիրել է բարդ ստորադասական նախադասության կապակցությունը՝ իր համապատասխան օրենքներով ու օրինաչափություններով: Գտնելով, որ «ստորադասական նախադասությունը զլիսավոր և երկրորդական նախադասությունների շարահյուսական մի բարդ ամբողջություն է, որն ունի կապակցման իր որոշակի օրինաչափությունները, միջոցներն ու ձևերը» (էջ 248), նա քննել է զլիսավոր և երկրորդական նախադասությունների շարահյուսական կապակցության մեջ զլիսավոր նախադասության կամ նրա անդամների կրկնությունը, շաղկապների, հարաբերական ու հարաբերյալ բառերի գործածությունը, ինչպես նաև պարզաբանել է, թե բայը իր եղանակաժամանակային տարրեր ձևերով ու սեռային նշանակությամբ, իսկ մյուս խոսքի մասերից էլ հատկապես՝ եղանակավորող բառերը, դերանուններն ու մակբայները ինչպիսի դեր են կատարում բարդ ստորադասական նախադասության համակարգում:

Հիմնականում ունենալով արդի հայերենի իրական փաստերն ու տվյալները՝ հեղինակը համապատասխանաբար ցույց է տվել, որ «զլիսավոր և երկրորդական նախադասությունների շարահյուսությունը այս կամ այն չափով կապված է երկրորդական նախադասությունների բնույթի հետ» (էջ 253) և շարահյուսական բնույթից բացի «պայմանավորված է նաև արտահայտած մտքի կարևորությամբ» (էջ 256), «երկրորդական նախադասությունները մեծ մասամբ ետադաս կիրառվում են ունեն, իսկ որոշ բնույթի երկրորդական նախադասություններ ունեն բացառապես միայն ետադաս շարահյուսություն» (էջ 258), ստորադասական նախադասության կապակցության մեջ անհրաժեշտ դեպքերում կարող են կրկնվել թե՛ զլիսավոր նախադասությունը, թե՛

երա մի մասը և թե՛ գլխավոր ու երկրորդական անդամները, ստորադասական նախադասություններն իրար հետ կապակցող լեզվական հիմնական միջոցները՝ շաղկապները, հարարերական և հարարերյալ բառերն ունեն իրենց գործածության յուրահատուկ օրենքներն ու առանձնահատկությունները և այլն:

Այդպես և Հիշտ ըմբռնելով բարդ ստորադասական նախադասության կապակցության մեջ բայի խաղաղած մեծ դերը և դա առաջին հերթին բացատրելով նրա ստորոգում արտահայտելու հատկությունը՝ Վերդյանը գտնում է, որ գլխավոր և երկրորդական նախադասությունների միև եղած ժամանակային կապերն ու հարարերությունները դրսևորում են բայի՝ տրամաբանորեն իրար համապատասխանող եղանակա-ժամանակային ձևերով, «արդի հայերենում նպատակի պարագա երկրորդական նախադասությունները միշտ էլ արտահայտվում են ըզձական եղանակի բայով, իսկ գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է արտահայտվել բոլոր եղանակների ու ժամանակների բայերով» (էջ 306), հաճախ բայի սեռով պայմանավորվում է այս կամ այն (հատկապես՝ խնդիր և ենթակա) երկրորդական նախադասությունների բնույթը, որ «եթե դատվող հատկանիշները նման են կամ հավասար, գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալներն արտահայտում են բայի դրական (կամ ժխտական) ձևերով» (էջ 327), իսկ «երբ բաղդատվող հանդամանքները կամ հատկանիշները իրարից տարբեր են, գլխավոր նախադասության ստորոգյալն արտահայտվում է բայի ժխտական խոնարհման ձևով, կամ ընդհակառակն» (էջ 328):

Հիշյալ գլխում բննարկված հարցերը, սակայն, այսքանով չեն սպառվում. առաջին անգամ Մ. Արևգյանի, հետագայում նաև ուրիշների կողմից հետազոտված բաղդատման ու հետեանքի շարահյուսական կարգերի լուսաբանությունը Բ. Վերդյանը շատ առաջ է տարել՝ հանգելով այն հիշտ եղրակացության, որ բաղդատության բոլոր ձևերը (նմանություն, հավասարություն, տարբերություն), ինչպես նաև հետեանքի շարահյուսական կարգը գործածության ավելի լայն ուրուտներ են ընդգրկում և ոչ թե սոսկ ձևի և չափի ու քանակի պարագա երկրորդական նախադասությունների հետ են կապվում, այլ դրսևորվում են գրեթե բոլոր ստորադասական կապակցություններում: Նմանապես պետք է ասել, որ նա հատուկ ուշադրություն է դարձրել հնչերանգի ու շեշտադրության հարցին, ցույց տվել, որ «բարդ ստորադասական նախադասությունը արտահայտվում է բաղդարիչների մի ամբողջական համահավաք հնչերանգով» և միաժամանակ նրա կազմում գլխավոր ու երկրորդական նախադասություններն ունեն իրենց յուրահատուկ հնչերանգը, որն էլ հիմնականում պայմանավորվում է. «ա) երկրորդական նախադասությունների բնույթով, ավելի ճիշտ՝ գլխավոր և երկրորդական նախադասությունների մտային փոխհարաբերությամբ. բ) շարադասությամբ և գ) շաղկապող բառերի արտահայտությամբ» (էջ 356):

Այս բոլորով հանդերձ գրախոսվող աշխատությունը ամենեին էլ զերծ չէ թերություններից, ստվերոտ ու պակասավոր կողմերից:

Այսպես՝ թվում է, թե բարդ ստորադասական նախադասության ամբողջական ուսումնասիրության պահանջով պետք է որ այնտեղ ներկայացվեր հարցի պատմությունը, ըստ ամենայնի՝ զնահատվեր անցյալի դիտական ժառանգությունը, որոշվեր տվյալ դեպքում հայ քերականագիտական մտքի զարգացման ընթացքը և բնականաբար՝ հիմնավորվեր նաև նոր ուսումնասիրություն կատարելու անհրաժեշտությունը: Բայց հեղինակը, դժբախտաբար, այդպես չի վարվել, պատճառաբանելով, թե «աշխատությունը շժանրաբեռնելու և ավելորդ կրկնություններից խուսափելու նպատակով հատուկ զուգի չի հատկացվել հայերենի ստորադասական նախադասությունների ուսումնասիրության պատմությանը՝ հատկապես նկատի ունենալով այդ բնույթի աշխատությունների առկայությունը» (էջ 4—5):

Նման արդարացումը հիմնավոր ու տեղին չէ, որովհետև նախ՝ իրականում ուրիշները միայն մասնակիորեն ու առանձին առիթներով կամ այլ իրողությունների առնչություններով են անդրադարձել հարցի պատմությանը, և ապա՝ չէ՞ որ այդ ուրիշների աշխատանքները ևս վերջինին են պատկանում և ամբողջի հետ նույնպես ենթակա են զնահատման ու արժեքավորման:

Առաջնորդվելով հիմնականում համաժամանակյա (սինխրոնիկ) մեթոդով, այսինքն՝ ուսումնասիրելով բացառապես ժամանակակից արևելահայ գրական լեզվի բարդ ստորադասական նախադասության համակարգը, Վերդյանը առանձին դեպքերում դիմել է տարածամասնակյա (դիսխրոնիկ) մեթոդին՝ փորձել բացատրել որոշ երևույթների պատմական ծագումն ու զարգացումը: Աշխատության ռբարդ ստորադասական նախադասության կազմավորումն ու զարգացումը հատվածում, օրինակ, նա պնդում է, թե բարդ ստորադասական նախադասությունները պատմականորեն առաջ են եկել բարդ համադասական նախադասություններից հետո և ձևա-

«որվել դրանց հիման վրա (տե՛ս էջ 43—44)» Մեր կարծիքով նման հարցադրումը բուրբուլիս է՝ ճիշտ չէ. ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական նախադասությունները թեև սարքեր եղանակով տարբեր մտքերի հարաբերություններ են արտահայտում, բայց ոչ մի դեպքում վերացարկման աստիճանով նրանցից մեկը չի զիջում կամ ստորադասվում մյուսին:

Ավելի՛ն. հասարակ տրամաբանությունը հենց ասում է, որ համազոր մտքեր արտահայտող բարդ նախադասությունների հետ միաժամանակ պետք է որ եղած լինեն նաև բարդ ստորադասական նախադասություններ, լեզուների, դրանց մեջ նաև հայերենի պատմական փաստերը բացառապես միայն այդ են հաստատում: Թերես հենց այն հանգամանքը, որ հնդեվրոպական հիմնալեզուն ունի թե՛ համադասական, թե՛ ստորադասական շաղկապներ, ցույց է տալիս, որ բարդ համադասական ու ստորադասական նախադասությունների իրար կողք-կողքի գոյությունն են ունեցել դեռևս հնագույն ժամանակներում և ըստ էության միմյանցով պայմանավորված և միաժամանակ միմյանց հակադիր իրողություններ են լեզուների մեջ:

Աշխատության հեղինակը, սակայն, հակառակ է գնում այդ բոլորին և իր տեսակետը հաստատելու համար արհեստականորեն մեծացնում է հնդեվրոպական ծագում ունեցող համադասական շաղկապների թիվը, իսկ ստորադասականներինը, ընդհակառակն, փոքրացնում է, ասելով՝ «պարզվում է, որ հայերենի արմատական շաղկապներից 13-ը ունեն հնդեվրոպական ծագում: Հետաքրքրական է, որ այդքան հին ծագում ունեցող շաղկապներից 9-ը համադասական են (և, ու, բայց, կամ, այլ, էլ, ապա, իսկ, ոչ) և միայն 4-ը՝ ստորադասական (որ, թե, քան, երբ)» (էջ 44): Ի հաստատումն դրա վկայակոչվում է Գր. Գարեգինյանի Մանգրականը ժամանակակից հայերենում և աշխատությունը, որտեղ, սակայն, Հր. Աճառյանի Արմատական բառարանին տվյալների հիման վրա իրավացիորեն նշվում է, որ ոչ թե հայերենի համադասական, այլ բուն արմատական 13 շաղկապներից միայն 9-ն է հնդեվրոպական ծագման, և որոնցից 4-ն էլ ստորադասական շաղկապ է: Հայտնի է նաև, որ կամ շաղկապը սերվում է պահլավերենի ԿՃՄ («կյանք»)–ից, քայց, ապա, իսկ շաղկապների ծագումը տակավին հայտնի չէ. և հետևարար՝ դրանք զուտ թյուրիմացաբար են հնդեվրոպական ծագում ունեցող շաղկապներ համարվել: Ավելացնենք, որ այդ բոլորի փոխարեն շահեկան կլիներ, եթե բացահայտվեին արևելահայ գրական լեզվի վերջին հարյուրամյակում բարդ ստորադասական նախադասությունների համակարգում կատարված տեղաշարժերն ու փոփոխությունները, որ, սակայն, չի արվել:

Ընդունելի չէ և ոչնչով չի հիմնավորվում նաև այն տեսակետը, որ իբր թե «նախ եղել են նախադասությունները դերբայական դարձվածներով, և ապա միայն կազմավորվել են բարդ ստորադասական նախադասություններ՝ զլխավոր ու երկրորդական նախադասություններով» (էջ 34): Ճիշտ է, դերբայական դարձվածները երկրորդական նախադասությունների կրճատման արդյունքը չեն և բնավ նրանցից չեն սերում, բայց այս նշանակում է արդյոք, թե ավելի առաջ են եղել, կարծում ենք, որ դերբայական դարձվածները երկրորդական նախադասություններից ոչ պակաս բարդ, ոչ պակաս վերացարկություն արտահայտող շարահյուսական միավորներ են և հետևարար՝ նրանցից առաջ ստեղծված լինել կարող: Բայց տվյալ դեպքում կարևորը, իհարկե, դա չէ. դերբայական դարձվածները ծագումնաբանորեն հին համարելով՝ Բ. Վերդյանը անտեսում է, որ նրանք ու երկրորդական նախադասությունները շարժառիթաբան ճամբարից են, հանգամանք. որ հնարավորություն է ընձեռում հնարավոր ու համապատասխան դեպքերում երկրորդական նախադասություններ կրճատելու ու արտահայտելու դերբայական դարձվածներով, և ընդհակառակն: Հասկանալի է, որ մեկի ու մյուսի, իբրև շարահյուսական հոմանիշների, բաղդատական քննություն, որ բացակայում է աշխատության մեջ, խիստ կարևոր է ոչ միայն բարդ ստորադասական նախադասության էությունը ավելի խոր ու հանգամանորեն բացահայտելու, այլև խոսքի կառուցման օրենքները յուրացնելու և գործնականում դրանք տեղին կիրառելու տեսակետից:

Աշխատության մեջ տեղ են գտել և փաստերի, օրինակների ոչ ճիշտ վերլուծություններ ու բացատրություններ: Որոշ օրինակներում ճիշտ չի որոշված երկրորդական նախադասությունների բնույթը: Այսպես՝ «Հասկանալու բան չկա, է՛ն կլինի, ի՛նչ որ ամենքը կըճռնեն» (էջ 132) բարդ նախադասության երկրորդական նախադասությունը դիտված է իբրև ստորոգելիական վերադիր երկրորդական նախադասություն, «Ընդհակառակը, այնտեղ ասված է, որ այդ եղել է պրավեպցիայի միջոց» (էջ 280–291), «Փողոցներից անցնողների թիվը իմանալու համար հարկավոր չէր լուսամուտներից դիտել նրանց, որոնք արդեն ծածկվել են ձյունով...» (էջ 158) նախադասությունների երկրորդական նախադասությունները դիտված են իբրև ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն, այնինչ իրականում՝ նրանք առաջին երկու օրինակներում՝

ենթակա (Ժամենքի վճռելիքը կլինի, Ժամենք է դրա՝ պրովոկացիայի միջոց լինելը), իսկ վերջինում, որ պայմանավորվում է եռյակ բայի շեղոթ սեռի նշանակություն արտահայտելու հանդամանքով, հանգման անուղղակի խնդիր (Ժարակավոր չէր... դիտել արդեն ձյունով ծածկվածներին...) երկրորդական բնույթի նախադասություններ են:

Նմանապես այն բարդ ստորադասական նախադասություններում, որոնց բաղադրիչները իրար են կապակցվում մի կողմից դերանվան ու ժամանակի իմաստ ունեցող դոչականի, մյուս կողմից՝ «եբք, մասամբ նաև ինչ հարաբերական բառերով»։ օրինակ՝ «էն օրվանից, ինչ դու հեռացել, իշիկ ես երկիր»... (ԼՂ 145), ստորադաս նախադասությունները ոչ թե հատկացուցիչ, այլ բացառական որոշիչ երկրորդական բնույթի (Հմմտ. ԵՖՏ ճեռաճալու, երկիր իջնելու օրվանից...) նախադասություններ են, ի դեպ սա ևս լավագույն ապացույցներից մեկն է այն բանի, որ ժամանակներ կազմելուց բացի ապառնի դերալու հանդես է դալիս նաև անկախ՝ որոշիչ պաշտոնով: Եվ կամ՝ հեղինակը կարծում է, թե «ես ծառան ինչքան երդում-կրակն է ընկնում, թե ինքր անմեղ է, բան չի դառնում», «եհզճ խոհարար երդում-կրակն է ընկնում, թե ամենատնտիկ մթերքն է առել»։ նախադասությունների (էջ 321) դիտարկումների մեջ իբր թե զեղչված է ասելով բայը, Ժույկ դուր ծառաներ եք, որ բանում եք ձեր տերերի այդինքնում (ԼՂ 299) նախադասության մեջ իբր թե զմար է որոշել, թե ուր բառը ինչ խոսքի մաս է՝ հարաբերական դերանուն, թե՛ ստորադասական շաղկապ (էջ 299), Այնինչ շատ պարզ է, որ երդում-կրակն ընկնել հարադրավոր բայը նշանակում է երդվել և կարող է երկրորդական նախադասություն պահանջել, իսկ ուր-ն էլ միայն ու միայն ստորադասական շաղկապ է:

Այս առիթով նշենք նաև, որ որոշ բառեր, ինչպես՝ ուր, փառք, մե՛րթ շաղկապ (տե՛ս էջ 171, 187, 207 և այլն) և մե՛րթ էլ հարաբերական դերանուն կամ բառ են (տե՛ս էջ 171, 237, 275 և այլն) դիտված:

Եվ վերջապես, զբախտովող աշխատությունն ունի նաև այսպես կոչված տեխնիկական բնույթի թերություններ. բարդ ստորադասական նախադասությունների և նրանց այլևայլ իրողությունների բացահայտման համար բերված օրինակներում հաճախ գլխավոր ու երկրորդական նախադասությունները ներկայացվել են առանց համապատասխան ընդգծումների (տե՛ս էջ 62—63, 84, 85, 89, 91, 94, 136, 170, 180 և այլն), որպիսի հանգամանքն էլ, բնականաբար, զմարություններ է հարուցում, թույլ չտալով մանավանդ շարքային ընթերցողին՝ հեշտորեն տարբերելու ու զանազանելու դրանք իրարից: Այդպես և առանձին գրողների (Մուրացան, Թումանյան և ուրիշների) գործերից առնված երկախոսությունները օրինակների շարքում մեծ մասամբ այնպես են տրված (տե՛ս էջ 277, 331 և այլն), որ ընթերցողը կարող է կարծել, թե դրանք ոչ թե հերոսի, այլ հենց հեղինակի խոսքն են:

Այս և նման թերությունները, բարբախտաբար, վերաբերում են մասնավոր հարցերի և ըստ էության չեն շոշափում աշխատության հիմնական բովանդակությունը: Բոլոր դեպքերում է՛. վերջյանի համար հիմնական ու ուղեցույց են ծառայել ժամանակակից հայոց լեզվի ընձեռած հարուստ փաստերն ու տվյալները. նա ինքնուրույն, միաժամանակ նաև «սեռ աշխատանք է կատարել և հայ գեղարվեստական (արձակ ու չափածո) գրականությունից քաղած դիպուկ ու բնորոշ օրինակների ցուցաբերմամբ ամբողջականացրել բարդ ստորադասական նախադասության ուսումնասիրությունը: Ուստի և դա իսկապես լուրջ ներդրում է հայ լեզվաբանական-քերականագիտական գրականության բնագավառում և միաժամանակ, իբրև օժանդակ ձեռնարկ, գործնական մեծ նշանակություն ունի բարդ ստորադասական նախադասության ուսուցման համար:

Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ: